



## ԱՐԱՄ ՎՈՐ. ԲՈՅԱԶՅԱՆ

Ք Ա Ր Ո Չ

(Էջմիածնի Ս. Աստվածածին եկեղեցի, 27 դեկտեմբերի 1987 թ.)

«Ձանոն Հօր և Որդու և Հոգույն Սրբոյ.  
ամէն»:

«Ամենայնի որ ունիցի տացի. եւ յայնամա-  
սէ որ ոչն ունիցի, և զոր ունիցին՝ բարձի  
ի հմանէ»:

«Ամեն ունեցողի պիտի տրվի, իսկ չունե-  
ցողից ունեցածն էլ պիտի առնվի»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ,  
Սյո նախադասությամբ ավարտվեց այս-  
օրվա Ծաշու Ս. Ավետարանը՝ գրված Ղու-  
կաս ավետարանի կողմից:

Հիսոս միշտ առակներով է խոսել իր  
շուրջը համախմբված ժողովորդին և իր ա-  
շակերտներին, որպեսզի օրինակելի պատ-  
կերներով ավելի տպավորիչ դառնա իր  
խոսքը երկնային թագավորության ու հա-  
վիտենական կյանքի մասին:

Սիա այդ առակներից մեկն էր, որ այ-  
սոր ունկնդրվեց և պատարագի ընթաց-  
քում:

Ազնվական մի մարդ հեռու երկիր է գր-  
նում իր թագավորությունն ստանձնելու և  
վերադառնալու. մեկնելուց առաջ կանչում

է իր ծառանձներին և յուրաքանչյուրին հա-  
վասարաշափ դրամ տպով (ուստ Ավետա-  
րանի՝ «մնաս») ասում է. «Գործի դրեք  
դրանք, մինչև որ ես վերադառնամ»:

Իր իշխանության հպատակ քաղաքացի-  
ները պատգամավորներ են ուղարկում  
քարձրագահ կայսրին, որպեսզի նրան  
զոկի իրենց վրա թագավորելու իշխանու-  
թյունից, որովհետև ասում էին նրան:

Սակայն, հակառակ ժողովրդի ցանկու-  
թյան, նա վերադառնում է դարձալ որպես  
թագավոր: Խնկում իր մոտ է կանչել տա-  
լիս ծառանձներին՝ ստուգելու համար, թե իր  
տված «մնաս»-ը ինչպես են օգտագործել  
և ինչ արդյունք են ստացել:

Սուաշինը ներկայանում և ասում է. «Տեր,  
քո «մնաս»-ը քերեց տասը մնաս»: Թա-  
գավորը գովում է ծառային և ասում. «Ապ-  
րես, բարի և հավատարիմ ծառա, քանի  
որ քիչ բանի մեջ հավատարիմ գտնվեցիր,  
քեզ տալիս եմ իշխանություն տասը քա-  
ղաքի վրա»:

Երկրորդ ծառան գալիս և հայտնում է,  
որ իրեն տրված մեկ մնասը շահ է քերել

հինգ մնաս: Թագավորը նրան էլ է գովում և իշխանություն տալիս հինգ քաղաքի վրա:

Երրորդ ծառան անհամարձակ մոտենալով՝ ասում է. «Տեր, քո մնասը, որը պահել էի թաշկինակիս մեջ, ահա ես եմ տալիս քեզ, որովհետև դու խիստ մարդ ես, և ես վախենում էի քեզանից. քանզի ինչ որ չեմ դրել՝ վերցնում ես, և ինչ որ չես սերմանել՝ հնձում»:

Տերն ասում է. «Չար և անհավատարիմ ծառա, քո իսկ բերանով քեզ եմ դատելո. քանի որ գիտեիր, թե խիստ մարդ եմ և ինչ որ չեմ դրել՝ վերցնում եմ, և ինչ որ չեմ սերմանել՝ հնձում, որին սեղանավորներին հանձնեիր, որպեսզի վերադարձի ստանայի նրա տոկոսային շահը»: Եվ անմիջապես կարգադրում է վերցնել նրանից մնասը և տալ տասը մնաս ունեցողին: Եվ երբ շորջը կանգնած ծառաներն ակնակրում են, թե նա արդեն տասը մնաս ունի, Տերը իր խոսքը շարունակելով՝ ասում է. «Ով որ ունի, պիտի տրվի նրան, իսկ չունեցողից ունեցածն էլ սիտի առնվի»: Եվ դարձալ ավելացնում է ասելով. «Այժմ իմ թշնամիներին, որոնք ինձ ասում են և չեն ուզում, որ ես իրենց վրա թագավորեն, բերեք այստեղ և իմ առաջ սպանեցեք նրանց»:

Սովոր այստեղ ավարտվում է: Խսկույն նկատելի է, որ Հիսուս իր առակախոսության մեջ օրինակները բերում է երկրային կյանքի դեպքերից ու երևոյթներից, որոնց միջոցով էլ շատ պատկերավոր, գեղեցիկ ու գրավիչ ձևով ուսուցանում է հոգևոր կյանքի գգաստությունը, որը կարևոր դեր ունի հավիտենական կյանք ժառանգելու գործում: Հիսուս այդ օրինակներով միաժամանակ ցույց է տալիս իր թաշատեղյակությունը տվյալ երկրի և ընդհանրապես քաղաքական օրենքների նկատմամբ:

Հիսուսից շորջ երկու հազար տարի հետո այս առակն ընթերցելիս տեղեկանում ենք, որին ուն, որ Հրեաստանի թագավորները նշանակվում են Հոռոմի կայսեր կողմից: Ըստ Հովսեփիոս Փալմիրոս պատմիչի վկայության, Հերովդեսը Հոռոմ գնաց՝ իր թագավորության տիտղոսի հրովարտակն ստանալու:

Հիսուս վերոհիշյալ առակը պատմել է Երիքովում, որտեղ գտնվում էր Արքեղայոս թագավորի շքեղ պալատը: Պատմությունից հայտնի է, որ հրեաներից հիսուն հոգուց քաղկացած մի պատգամավորություն Հոռոմ էր գնացել նրա կատարած անգթությունների մասին բողոքելու և խոչընդոտ հանդիսանալու նրա թագավորելու ձգտում-

ներին, սակայն արդ գանգատները ապար-դյուն էին մնացել, և նա՝ Արքեղայոսը, թագավոր էր նշանակվել:

Հողմենական կայսրության ժամանակի օրենքներին ակնարկելուց ավելի, Հիսուս իր պատմած առակով տալիս էր բարոյական մի պատգամ, որի բովանդակությունը բոլոր ժամանակներում ուղեցույց է լինելու երկնային անվանական թագավորության վայելքին արժանանալու համար:

Ավետարանը ճշմարիտ և անգրավ կյանքի պատգամատու համապարփակ Սուրբ Գիրքն է, երկրային իրադարձությունների և երկնային անհերքելի մեծագործությունների վավերագիր մատանը:

Եթե փորձենք մեկնաբանել այս առակում թարբեկած այլարանական իմաստը, ապա դժվար չի լինի եօրակացնել, որ առակում հանդես եկող ազնվական անձը Հիսուս Քրիստոսն է, իսկ նրա գնացած հեռավոր երկիրը՝ երկինքը, որն այսուղե առնված է ոչ թե իր տարածական հեռավորության իմաստով, այլ՝ ժամանակի, ըստ որում ակնարկվում է: Աստուծո թագավորության անօրինությանը ոչ թե հրեաների ըմբռնամբ Մեսիայի շուտ հայտնվելով, այլ աստվածային կամքի նախահիմանալով կատարումով:

Հիսուս այս առակով մի կանխասացություն էր անում շեշտելով իր անձի դեմ հրեաների ցուցաբերած ատելությունը: Նըրանք մետագայում Պիլատոսի առջև, որպես քաղաքացիներ, բարձրադադակ գոչելու էին. «Չունենք մենք թագավոր, բացի կայսրից» և դարձալ՝ «Մի գրիր՝ Թագավոր Հրեանց» (Հովի. ԺԹ 15, 21): Հրեաները համարվեցին առակում նշված թշնամիները, որոնք սպանվեցին Հիսուսի սիրուց գրկվելով:

Այս առակով շատ հատակ կարելի է ընդգծել Տիրոց պատգամի նկատմամբ երեք տարրեր մոտեցումներ, ըստ ծառաների դրսուրած վերաբերմունքի: Առաջինը ցուցաբերել էր լրիվ ու ամբողջական հավատարմություն, երկրորդը դրսուրել էր գաղջ կեցվածք, իսկ երրորդը՝ լրիվ անհավատարմություն:

Կարևոր պարագա է նաև ընդգծել հավատարիմ ծառաների մոտեցման եղանակը: Նրանք պատկառելի խոնարհությունները ոչ թե իրեն, այլ Աստուծո անօրինող կամքին է վերագրում, ըստ Պողոս առաքյալի (Ա.

Այսպես պետք է լինի ճշմարիտ քիսունեամ, որն իր հաջողությունները ոչ թե իրեն, այլ Աստուծո անօրինող կամքին է վերագրում, ըստ Պողոս առաքյալի (Ա.

Կորնթ. ԺԵ 10), որն ասում է. «Ոչ ես, այլ շնորհըն Աստուծոյ որ յիս», այսինքն՝ «ոչ թե ես ինքս հաջողության հասա, այլ Աստուծոյ տված շնորհի համաձայն հաջողություն ունեցա»:

Հավատարմությամբ գործելը մեծ շահեկանություն ունի: Երկրային կյանքում անգամ նկատելի է, որ հավատարմություն ցուցաբերող անձը մեծ գնահատանքի է արժանանում իր լավ ծառայության դիմաց. իսկ թերացում ցուցաբերելու դեպքում նույնքան բնական է, նրանից եւ է վերցվում տրվածը և տրվում ավելի արժանավորին: Այդպես էլ երկնային թագավորության մեջ, ուր դատաստանը ամեղ է, և յուրաքանչյուրին տրվում է «ըստ գործոց իրոց»: «Որոց զբարիս գործեալ իցէ՛ ի յարութիւն կենաց և որոց զշար արարեալ իցէ՛ ի յարութիւն դատաստանաց» (Հովհ. Գ. Ե 7—29): Երրորդ ծառայի պարագան, որը լրիվ անհավատարմություն էր ցուցաբերել, համեմատելի է անհոգության պատճառով չափաշխարող մարդկանց, որոնք մոռանում են իրենց պատասխանատվությունն ու պարտաճանաչությունը տիրոջ առջև և անշնորհք հանդգնությամբ փորձում են արդարանալ՝ ասելով՝ թե Աստված «իմստ է», տալիս է «քիչ», պահանջում է «շատ», տվել է «անսուրբ» բնություն, պահանջում է՝ «սուրբ» կյանք, ուզում է քաղել սրբության «պատուիներ» այնտեղից, ուր չի սերմանել սրբության «սերմեր»:

Այսպիսիները իրավամբ արժանի են ապերախտ կոչվելու, որովհետև կամովին և չարամտորեն մոռանում են մեր հանդեպ Աստուծո ունեցած սիրո և բազմաթիվ շնորհներով մեզ զարդարած առաքինությունների հշանեները:

Երբեք աետք չէ մոռանալ, որ Աստված ի խնդիր մեր նկատմամբ տածած իր անփոխարինելի սիրո, իր Միածին Որդին աշխարհ ուղարկեց և նույնիսկ դեպի մաս առաջնորդեց՝ մեր մեղքերի քավության և մեր հոգիների փրկության համար. ու դարձալ՝ Սուրբ Հոգին առարվեց մեր վշտագնյալ սրտերը միխթարելու, մեզ նորոգելու և վերստին երկնքի ծառանցորդներ դարձնելու համար:

Սիրելի հավատացյալներ, քրիստոնյա մարդք իր աստվածապարգև կյանքի համար միշտ պատասխանատու է Աստուծո առաջ: Այդ կյանքը երկրավոր ճանապարհորդությամբ նպատակամիջված է դեպի

երկնավոր հավիտենական կյանքի երանական վայելքը:

Մենք՝ հողածին արարածներս, ունենալու հավատակներ և տիպում ենք, եր դրանք չեն իրականանում: Հապա ինչպես կարելի է անսեսել Աստուծո մեծ նպատակը մեր հոգիների փրկության համար, եր զանց ենք առնում մեր պարտականությունները ու գործում ենք հայտնի մեղքեր, որով կորցնում ենք շնորհարաշխության մեծ գանձը՝ Քրիստոսի սերը: Այսպիսիներին կարելի է նմանեցնել մարդկանց, որոնք աշխարհան կյանքով են ապրում, աշխարհիկ վայելքների մեջ հրդիացած, ձեռքերով փակում են իրենց աշերը և միամտորեն ապում. «որ արև չկա»:

Ուրեմն, բարեպաշտ քույրեր և եղբայրներ, այսօր, եր տարվա վերջին կիրակին է, մեզ մնում է ընծայված առիթն օգտագործելով ամփոփվել մեր եերաշխարհի մեջ և մեզ քննելով անդրադառնալ ու տեսել, թե առակի ո՞ր ծառային ենք նմանվում. որովհետև, ինչպես պարզ դարձավ, ոչ միայն տրվածն է պահանջվելու մեզնից, այն նրա բերած արդյունքը, որը մեծապես գնահատվում է ի նշան հավատարմության: Անհավատարիմ անձը պատվում է և շրջապատից, և Աստծոց:

Ինչպես որ տարին սահեց, և մենք այժմ կանգնած ենք նրա անցման շեմին, այնպես էլ մեզ տրված այս ժամանակավոր կյանքը պիտի սահի, և երկնավոր ազնվական թագավորը՝ Հիսուս, մեծ փառքով պիտի գա՝ իր պարգևած մնասների հաշիվը պահանջելու:

Աղոթենք ու խնդրենք Աստուծո ողորմությունը, որ մեզ պարգևած իր շնորհներն ավելացնի և մեզ օգնի Ս. Ավետարանի պատգամների համաձայն կյանք վարելու և սպասելու իր երանավետ ձայնին, որ ասելու է. «Բարի և հավատարիմ ծառա, դու որ քիչ բանի մեջ հավատարիմ գտնվեցիր, քեզ կարգելու եմ շատ բաների վրա»: «Մուս յուրախութիւն Տեառն Քո»:

Թող Տերը ձեզ բոլորիդ պարգևի առողջություն և աստվածանան կյանք՝ գալիք 1988 թվականը նույնպես անցկացնելու խաղաղության մեջ և ձեր բարի նպատակների իրագործումը տեսնելու, թող ձեզ պարգևի արևշատ երշանիկ օրեր՝ փառաբանությամբ Սուրբ Երրորդության այժմ և միշտ և հավիտյան հավիտենից. ամեն: